

## ՄԵՐ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ\*

**Բանալի բառեր** – ազգային պետություն, պատանդառում, զոհաբերում, կառավարելի պարտություն, քավության նոխազ, նմանակումային դիմակայություններ, դավաճանության մրցույթ:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի առաջին փուլում մեզ բաժին ընկած անհաջողությունների պատճառների բացահայտման ասպարեզում հայ հասարակության մեջ տիրող մտքերի քառսը մեծապես վտանգում է նրա երկրորդ փուլին նախապատրաստվելու խնդրի լուծումը:

2020 թ. աշնան անհաջողությունների իրական պատճառների ներկա հիմնավոր աղավաղումը կամ միտումնավոր քողարկումը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ չենք հասել մեր ազգային մտածողության ձգնաժամի սկիզբը դարձած իրողությունների խորքային ընկալմանը՝ մինչև վերջ բացահայտելով դառը ճշմարտությունը: Իսկ վերջինիս ձգնաժամը սկսվել է ոչ թե 1988 կամ 1991, այլ 1998 թվականից, երբ ի պատասխան սեփական ուժերով Ղարաբաղյան հաղթանակը պահելու հարցում Հայաստանի առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի դրսևորած լուրջ կասկածների՝ մեզանում առաջադրվեց ու հիմնավորվեց **ազգային պետություն** ունենալու խնդիրը: Տարածաշրջանում Հայաստանին բաժին ընկած թուրք-ադրբեջանական արքանի առկայության պայմաններում նման խնդրադրությունն ինքնին ճիշտ էր, ուստի երբ առաջին նախագահը հեռանում էր ասպարեզից, հարկ էր նաև ձշտել, թե ինչ տնտեսաքաղաքական բովանդակություն է ունենալու հայկական ազգային պետությունը:

*Պարասիսանելով Ղարաբաղի հարցի շուրափույթ լուծումը չգրնելու պարագայում Ադրբեջանի հետ դիմակայության մեջ մեզ սպասող անհաջողությունների մասին Տեր-Պետրոսյանի նախազգուշացումներին՝ րնտեսագետ Արոմ Մարգարյանի հետ միասին 1997 թ. վերջերին – 1998 թ. սկզբներին հրապարակած մի շարք վերլուծականներում մենք հիմնավորում էինք այն տեսակետը, որ Հայաստանի առաջին նախագահի թեզերը միանգամայն ճիշդ են քանակական չափորոշիչների վրա հիմնվող մրցակցային մի-*

վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 4 (72), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2020

\*Ընդունվել է տպագրության 17.01.2021:

ջավայրի համար: Այսինքն՝ հակառակորդի փնտրեսական, ժողովրդագրական և այլ առավելությունների առկայության պայմաններում, իսկապես որ, ժամանակն աշխարհում էր նրա օգտին: Բայց քանի որ 21-րդ դարի նախաշեմին մարդկությունը թևակոխել էր նոր իրականություն, որտեղ բնական ռեսուրսների վրա հիմնված փնտրեսության քանակական առավելությունները դյուրությամբ հաղթահարելի էին **որակական ռեսուրսների, այսինքն՝ մարդկային մարքի ու նրա սրբեղծած նորագույն փեխնոլոգիաների միջոցով**, մենք պնդում էինք և այսօր էլ պնդում ենք որ Հայաստանն ուներ իր հաղթանակը պահելու և ամրապնդելու բոլոր հնարավորությունները: 1998 թվականին Հայաստանն ուներ որակյալ գիտական ու ինժեներական կադրեր, տեղեկարկական, լազերային ու նանո տեխնոլոգիաների և այլ ասպարեզներում առկա որոշակի ձեռքբերումներ և դրանք բազմապատկելու ներուժ կարողականություն, ուստի, միանգամայն հաղթահարելի համարելով **Լ. Տեր-Պետրոսյանի մրահոգությունները**, մենք մերժում էինք նրա հողվածի դրույթները:

Բայց ողջ խնդիրը նրանում է, որ այդ օրերին գիտնականների մեր խմբի կողմից ուղղակիորեն կամ «Երևան» տեղեկատվական կենտրոնի միջոցով առաջադրված նման ազգային-ռազմավարական նպատակադրումները ենթադրում էին նաև Հայաստանի արդիականացմանն ուղղված միջոցառումների մի ամբողջ համալիրի իրականացում՝ ազգային պետության տնտեսական ու գիտատեխնոլոգիական հիմքերի ձևավորման համար: **Ուժի գործոնի<sup>1</sup>** հիմնական բաղադրիչների բոլորովին նոր ընկալման վրա հիմնվող մրցակցային միջավայրում հաղթելու համար անհրաժեշտ՝ տնտեսական ու գիտատեխնոլոգիական առաջնահերթությունները նույնպես առաջադրվել ու հիմնավորվել էին մեր խմբի կողմից: Սակայն շուտով պարզվեց, որ արդիականացման ձանապարհով հզորացման ռազմավարական առաջադրանքը որևէ կապ չունի 1998-ից Լ. Տեր-Պետրոսյանին հաջորդած Հայաստանի գույգ նախագահների՝ «ազգային» ցուցանակի տակ քողարկված իրական նպատակների հետ: 2000-ականներին վերականգնողական աճի ձանապարհով տպավորիչ թվեր արձանագրած ՀՀ տնտեսության առաջընթացը շփոթելով **գարգացման ռազմավարության**, այսինքն՝ գիտատեխնոլոգիական ներուժի օգտագործմամբ որակապես նոր մակարդակի հասնելու խնդրի հետ՝ նրանք հիմնովին տապալեցին քանակական ցուցանիշներով մեզ գերազանցող Ադրբեջանին տնտեսական ձակատում չպարտվելու ազգային-ռազմավարական առաջադրանքը: Ավելին՝ նրանք տասնամյակներ շարունակ համոզված էին, որ տարածաշրջանային ստատուս-քվոյի պահպանման մեջ շահագրգիռ Ռուսաստանն ուղղակի թույլ չի տա դրա միակողմանի խախտումը Ադրբեջանի կողմից: Ազգային պետականության ցուցանակի տակ փաստորեն լծվելով մի նոր ԽՍՀՄ-ի ձևավորման պուտինյան նախագծի սայլին՝ նրանք իրականացրին ոչ թե Արցախի անվտանգության ապահովման, այլ նրա **պատանդառ-**

<sup>1</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս պրոֆ. **Ա. Մանասյանի** ուշագրավ հրապարակումը, որը հաջորդում է ներկա համբարակամին:

ման և ապա **գոհաբերման** միջոցով մեկ այլ երկրի շահերի սպասարկման գործառույթները:

ԽՍՀՄ ժամանակներից պահպանվող **հին համակարգը** 1998-ից հետո **դառարադյան վիկինգների** կերպարանքն ընդունելու միջոցով մեր երկիրը նեւտեց հակաքաղաքակրթական տեղապտույտի հորձանուտը: Չգիտես ինչու իրենց «ազգայնական» համարող կոռունպացված պաշտոնյաների կողմից ղեկավարվող Հայաստանը մեկուսացավ համաշխարհային քաղաքական, տնտեսական ու տեխնոլոգիական զարգացումներից ու վերածվեց հպարտ դոյակաշինարարների և պարծենկոտ գեներալների երկրի: Այդպես շարունակվեց մինչև այն պահը, երբ Հայաստանի թվով արդեն երրորդ նախագահի առջև հստակորեն դրվեցին սկզբում՝ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման (2008-2009 թթ.) եւ ապա՝ Արցախի յոթ շրջանները 5+2 սխեմայով հանձնելու (2011 թ.) պահանջները: Մինչդեռ եթե 1998-2008 թվականները Հայաստանի համար սոսկ քանակական աճի, իսկ 2008-2018 թվականները լճացման տարիներ էին, ապա Ադրբեջանի համար դա էներգակիրների վրա հիմնված ռեսուրսային տնտեսության թռիչքի շրջան էր:

Տնտեսության, գիտության ու նորագույն տեխնոլոգիաների ոլորտներում Հայաստանին սպասող կատաստրոֆիկ պարտությունների մասին մեր նման ինտելեկտուալների՝ նախագուշացնող հողվածները և անգամ Ղարաբաղյան առաջին պատերազմում հաղթանակած ՊԲ հրամանատար գեներալ Սամվել Բաբայանի՝ իր նախկին զինակիցներին ուղղված կոնկրետ գեկուցագրերը բախվեցին պաշտպանական ավելի մեծ համակարգի մասը լինելու մասին նրանց հավաստիացումներին: Մինչ թշնամին առաջ էր անցնում նավթ ու գազ վաճառելու, իսկ հետո էլ նորագույն ռազմական տեխնոլոգիաներ ձեռք բերելու միջոցով, դրանց նախագծման ոլորտում Հայաստանի ունեցած նախնական առավելությունները հողս ցնդեցին՝ բախվելով ապագային-կայսերամետ գործիչների «**իսկանդերյան հավաստիացումներին**», բայց նրանց գովաբանած «Իսկանդեր»-ները 2020 թվականին չեզոքացվեցին հակառակորդի փոքրիկ անօդաչու սարքերի կողմից:

Ամենայն պատասխանատվությամբ պնդում ենք, որ հենց այդ նույն անօդաչու թռչող սարքերի նախատիպերի մշակումն ու մասնակի արտադրությունը Հայաստանում սկսվել է դեռևս 1970-1980-ականներին տողերիս հեղինակի աչքերի առջև և իրականում հայկական շահերով առաջնորդվող ազգային պետության բացակայությունն է հանգեցրել դրանց հետագա կատարելագործման գործընթացի կասեցմանը: Նույնը վերաբերում է նաև գիտատեխնոլոգիական առաջընթացը պայմանավորող մյուս բնագավառներին, որոնցում Հայաստանի գիտնականները համաշխարհային մակարդակի վրա էին: Այդ փաստը 1990 թվականին հպարտությամբ արձանագրում էր Հայրենիք վերադարձած մեր կուսակցության առաջնորդը՝ **Հրայր Մարուխյանը**՝

պնդելով, որ դա թույլ է տալու մեր առավելությունը վերածել ոչ միայն Ադրբեջանի, այլև Թուրքիայի հանդեպ ռազմատեխնիկական գերակայության: Ուրեմն ի՞նչ տեղի ունեցավ մեզ հետ և ո՞վ խանգարեց մեզ այդ գործում:

Ավելին՝ ոչ միայն խանգարեց, այլև ուղղորդեց, քանզի մեր հաղթանակին հաջորդած 15-ամյա տեղապտույտից հետո՝ 2011 թվականին Կազանում ստանալով ազատագրված տարածքները հանձնելու հստակ հրահանգ՝ Հայաստանի երրորդ նախագահն ինքն էր ստածում հնարավոր զիջումների մասին: Նավթի վաճառքից գումարներ վաստակելով՝ ԽՍՀՄ-ի վերականգնման հակաքաղաքակրթական երազատեսության մեջ ընկած Մոսկվան առաջադրել էր Ադրբեջանին ևս իր ինտեգրացիոն ծրագրերի մեջ ներառելու խնդիրը: Ուստի 2016 թ. ապրիլյան նմանակումային պատերազմի միջոցով հարցի լուծումը գտնելու ձախողված փորձից 2 տարի անց՝ 2018 թ. ապրիլ-մայիսին, գործի դրվեց նույն խնդրի լուծման **ներքաղաքական տարբերակը**, որը դեռևս «Վէմ»-ի 2018 թիւ 2-ի Խմբագրականում մենք գնահատել ենք որպես «Ղարաբաղի հարցի «եվրասիական լուծման» համատեքստում ազատագրված 5 շրջանների վերադարձն ապահովելու՝ Մոսկվայի համառ փորձերը ժամանակավորապես կասեցրած սովերային գործարք Հայաստանի իշխանության ու ընդդիմության մի հատվածի միջև, որը «լեգիտիմացվեց» երկրի նախկին ու ներկա առաջին դեմքերի կազմակերպած 2018 թ. ապրիլ-մայիսյան «համատեղ ներկայացման» միջոցով»<sup>2</sup>:

Այնուհետև արձանագրելով, որ նման «հեղափոխության» արդյունքում «Լավրովյան պլան» անունը ստացած մոսկովյան հայտնի ծրագիրը 2018 թ. մայիսից հետո նորից է հետաձգվել, իսկ դրա դիմաց Ադրբեջանին տիրանալու փոխարեն Ռուսաստանը հայտնվել է նաև Հայաստանը կորցնելու վտանգի առջև, մենք ցույց էինք տալիս, որ «...տեղի ունեցածի իրական սցենարիստը՝ 2018 թ. ապրիլ-մայիսին սեփական «ինքնասպանությունը» բեմականացրած **Մեծ փողապետը** (նախագահ Սերժ Սարգսյանը - Գ. Խ.), խաբել է և՛ իր մոսկովյան տիրոջը, որն առայժմ չգիտի, թե ումից պահանջել նրա խոստումների կատարումը, և՛ իշխանության խաղաղ փոխանցման գծով իր փաստացի գործընկերոջը, որին ադրբեջանական նոր ագրեսիայի սանձազերծման միջոցով կարելի է վերածել **քավության նոխազի**»<sup>3</sup>: Այդ պատճառով մենք նախագուշացնում էինք, որ «...առաջիկայում, երբ Մոսկվան ուշքի կգա արևմտյան գրկախառնությունից, Հայաստանի նոր իշխանությունները կարող են բախվել Ադրբեջանի 2016 թվականի ապրիլյան ագրեսիայի նոր, ավելի հզոր դրսևորմանը: **Ուրեմն՝ կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ ներկայումս երկրում թափ հավաքող նախընտրական կամպանիան չպետք է շեղի մեր ուշադրությունը հիմնական վտանգից՝ Ղարաբաղյան պատե-**

2 Եռաչափ գործընթացի վտանգավոր հետազոծը, «Վէմ», 2018, N 2 (ապրիլ- հունիս), էջ 4:

3 Նույն տեղում, էջ 5:

**րազմի նոր բռնկման հեռանկարից, ինչը կարող է վերածվել նաև նախկինների քաղաքական ռևանշի գործիքի»<sup>4</sup>:**

Հարց է առաջանում՝ ներկայումս, երբ ակնհայտ է տարիներ շարունակ հնչեցված նման նախագգուշացումների անտեսման փաստը, երբ ակնհայտ են նաև ազգային մեծ ձախողման **հիմնական պատասխանատուներն** ու հանցանքի սեփական բաժինն ունեցող մանր-մունր **քավության նիկոլիկները**, որպես ազգ ու պետություն վերջապես կարո՞ղ ենք հասկանալ թե որտեղից էին ուղղորդվում Հայաստանում 2018 թ. բեմադրված «գունավոր հեղափոխության» իրական՝ **խորքային լծակները** և որդեգրել իրավիճակը շտկելու ճշմարիտ ուղին:

**Կարող ենք**, եթե անգորությունից ծավոլ ինքնախաբեության փոխարեն գիտակցենք, որ նորին մեծություն ժամանակը սկսում է աշխատել մեր օգտին: Որովհետև Ղարաբաղյան երկրորդ պատերազմը ոչ միայն իր տարածաշրջանային, այլև գլոբալ ետնաբեմն ուներ: Իր գլոբալ ազդակով սա նախկին ԽՍՀՄ-ի երկրներում Ռուսաստանի հենարանների կազմաքանդման սկիզբն է, իսկ տարածաշրջանային առումով՝ Լենին-Աթաթուրք գործարքի բնորոշ Ղարաբաղի վրա տարածելով՝ այն կասեցնելու Ռուսաստանի ու Թուրքիայի համատեղ փորձը: Ուստի ինչպես Ղարաբաղի հայերից սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումը, այնպես էլ նրանց հասցված երկկողմանի հարվածով է սկսվում հաջորդ խաղը: Հետխորհրդային տարածքում **Թուրքիայի հետ կիսվելու** Ռուսաստանի ղեկավարության ներկա մտադրությունները պատմականորեն դատապարտված տեսակների՝ **աշխարհաքաղաքական դինոզավրերի** ինքնապաշտպանական ռեակցիայի դրսևորումներ են: Սրանով կողմերը նպատակ ունեն փակել երրորդ երկրների մուտքերը՝ իրենց միջև բաժանելով տարածաշրջանը: Ուստի երկու երկրների Գլխավոր շտաբների մակարդակով նախապես ուրվագծվել են Հարավային Կովկասում նրանց ազդեցության հյուսիսային (ռուսական) և հարավային (թուրքական) գոտիները և ըստ այդմ կողմերի գերակայությունները համապատասխանաբար՝ Ղարաբաղում ու Նախիջևանում: Հենց Մոսկվայում է մշակվել նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմի գաղափարական հիմնավորումը՝ Հայաստանի իշխանական վերնախավի «սորոսական» լինելու մասին ամբաստանությունը: Սա 1920 թ. թուրք-հայկական պատերազմում բոլշևիկների կիրառած «համաշխարհային իմպերիալիզմի գործակալ» մտակաղապարի պատճենումն էր, որով իրականում թիրախավորվում էր աշխարհի ամենահակասորոսական երկիրը՝ Արցախը: Վերջինիս **կառավարելի պարտության** մատնելու ռազմական պլանի իրականացումը նույնպես քողարկված կերպով ապահովել է Ռուսաստանի ղեկավարությունը: Դա ենթադրում էր գենք ու զինամթերքի նորմավորված

4 Նույն տեղում, էջ 6:

մատակարարումներ՝ դաշնակցային պարտավորությունները կատարելու մասին խոսելու համար, որոշ գինատեսակների գործադրման արգելք և գուգահեռաբար Ղարաբաղի հարավային ճակատի փլուզում՝ ներքին խափանարարությունն արտաքին հզոր հարվածի հետ գուգորդելու միջոցով: Ուստի պատերազմի առաջին օրերին ՌԴ արտգործնախարարը ներկայացրեց ազատագրված յոթ շրջաններն Ադրբեյջանին հանձնելու հստակ պահանջ, իսկ այն Հայաստանին պարտադրելու գործընթացում իրականացվեցին նույնքան հստակ դերաբաշխումներ՝ **բորո էրդողանի** և **պուպուշ Պուտինի** միջև: Հենց Պուտին-էրդողան պակտի համատեքստում է հասկանալի դառնում առանձին «սպաների» կողմից ռազմաձակատում լայնորեն ծավալված քարոզչությունը՝ «Արա՛ փախեք՝ Նիկոլը հողերը ծախել ա» թեմայով: Անիմաստ է անգամ պարզել՝ 2018 թ. մայիսին այդ նպատակով իշխանության բերված անմեղունակ Նիկոլ՝ն է «ծախել» հողերը, թե՞ նման քարոզչությամբ զբաղվողները, որովհետև, ի վերջո, երկուսի **«թելերն»** էլ նույնի ձեռքերում էին: Պարզապես 18-20 տարեկան հայ զինվորների դրսևորած անօրինակ սխարանքի թիկունքում ծավալվել էր մի իսկական դավաճանության մրցույթ՝ պարտությունը բեմականացնելու խնդրի շուրջ: Մինչդեռ՝ մեր պատանի զինվորների աննկարարելի քաջությունը թույլ էր տալիս Արցախի լեռնային տեղանքում չեզոքացնելու հակառակորդի ռազմատեխնիկական առավելությունները և նվազագույնը՝ չհանձնելու Հադրութն ու Շուշին: Հայ ժողովուրդը երբեք չի ներելու ինչպես այս ազգային դավաճանության **բուն կնքահայրերին**, այնպես էլ հանցավոր թեթևամտությամբ սերունդների արյամբ ձեռք բերվածը մսխած **ծաղրածունների թափորին**: Չի ներելու նաև մեզ, որ գիտակցելով այդ ամենը՝ ուժ ու նաև քաջություն չունեցանք ժամանակին բացահայտելու **դավաճանության էստաֆետի** բոլոր մասնակիցներին:

Բայց քանի որ մեր 2020 թ. աշնանային անհաջողությունները անխուսափելի էին դարձել գլոբալ ու տարածաշրջանային ուժերի տարամիտված նպատակների **ժամանակավոր համադրության** արդյունքում, մենք հնարավորություն ունենք փրկել դրությունը՝ վրեժ լուծելով թշնամու հրթիռներն ու ռումբերն իրենց մատղաշ մարմիններով փակած մեր պատանի զինվորների արյան համար:

2020 թ. աշնանը մեզ հետ տեղի ունեցածը իրականում մեծ խաղի սկիզբն է միայն: Պատճառն այն է, որ ԱՄՆ-ի թրամփյան ինքնամեկուսացման ֆոնին ձևավորված Մեծ Բրիտանիա-Իսրայել-Թուրքիա եռյակի տարածաշրջանային առաջնահերթությունները Ղարաբաղյան երկրորդ պատերազմի համատեքստում ոչ միայն չէին հակասում, այլև լիովին համահունչ էին «Բրիտիշ պետրոլիումի» բարձր հովանավորությամբ Արևմուտքի էներգետիկ քաղաքականության մեջ ձեղքեր բացած կրեմլյան նավթավաճառների ծրագրերին: Ուստի այս դավադիր գործարքի վերջնական հաջողության վճռորոշ պայմանը Լոն-

դոնյան ֆինանսատնտեսական կլանի «վաշինգտոնյան ձիուկի»՝ իզոլյացիոնիստ Դոնալդ Թրամփի հաղթանակն էր ԱՄՆ նախագահական ընտրություններում: Վերջինիս պարտությանն անմիջապես հետևած խորքային վերադասավորումները՝ որպես կրեմլյան նավթավաճառների ու Անկարայի բորենինների հովանավոր Լոնդոնյան կլանի հանդեպ Ուոլ Սթրիթի հաղթանակի վկայություն, անմիջապես խարխլեցին Պուտին-Էրդոհան գործարքի արևմտյան թիկունքը: Ուստի պատահական չէր, որ պատերազմից հետո նրա արդյունքների իրավական ձևակերպման, այսինքն՝ Հայաստանին **խաղաղության պայմանագիր** պարտադրելու փորձերը բախվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի արևմտյան համանախագահների հակազդեցությանը:

Այսպիսով՝ թեև հայկական գործոնը նկատելիորեն թուլացվեց ու կրկին դրվեց ռուս-թուրքական «մուրձի ու սալի» ձնշման տակ, բայց 1921 թ. մարտի 16-ի (18-ի) չարաբաստիկ պայմանագրի օրինակով Հայաստանը **դուրս չդրվեց** մեծ խաղից՝ ինքնիշխանության կորուստի միջոցով: Դա գիտակցում են բոլորը, այդ թվում՝ նյարդայնանալու ակնհայտ նշաններ ցույց տվող մեր թշնամիներն ու գերիների վերադարձի ձգձգումը հանդուրժելով՝ Հայաստանի ինքնիշխանությունը խարխլող «բարեկամները»: Բայց արի ու տես, որ Հայաստանում այս գույգ իրողությունները գիտակցվում են միայն առանձին ինտելեկտուալների մակարդակով, իսկ փլուզված քաղաքական դաշտն ու վերջինիս ծնունդ քաղաքական իշխանությունն առայժմ անհաղորդ են մեծ դավին, ուստի հետպատերազմյան գործընթացները մեզ անում վերածվել են անիմաստ պտույտների:

**Իրականում** մեր անհաջողության **առաջին** ու գլխավոր պատճառն այն է, որ մենք չունենք Հայաստանի ու հայության նպատակներով ու իղձերով առաջնորդվող ազգային պետականություն, որի ուժային համակարգը սպասարկում է միայն իր երկրի շահերը, ուստի մեր զավակների արյան գնով մղվող պատերազմները վերածվում են աշխարհաքաղաքական վիճակախաղերի. «համընկավ»՝ կշահենք, «չհամընկավ»՝ կպարտվենք:

**Երկրորդ**՝ պատճառն այն է, որ մեր դաշնակիցը համարվող երկրի ուժային համակարգի կցորդը դառնալու հետևանքով բավականաչափ հետ էինք մնացել բանակի կարիքների գիտատեխնոլոգիական ապահովման ասպարեզում: Բայց եթե անգամ մինչև վերջ հավատարիմ լինեինք **տեխնոլոգիապես պարտված բևեռին**, ներքաղաքական փակուղում հայտնված մոսկովյան իշխանավորները իրենց բախտակից էրդոհանների հետ կիսվելու համատեքստում, **եթե հասցնեին**, աճուրդի էին հանելու ոչ միայն Արցախը, այլև Ջանգեզուրը:

Բայց քանի որ գլոբալ գործոնները շրջվել են Պուտին-Էրդոհան հակահայ դավադրության դեմ, նախքան Ռուսաստանի ու Թուրքիայի ռազմավարական հնազանդեցման գործընթացի ծավալումը, Արցախին որոշակի կարգավիճակ պարտադրելու միջոցով նրանք փորձելու են թաքցնել համատեղ

հանցագործության հետքերը՝ օգտագործելով մեր սահմաններին զանազան սպառնալիքներ բեմականացնելու մարտավարությունը: Մինչդեռ երեկ մեզ համար փոս փորողները նոր աշխարհաքաղաքական իրավիճակում շատ շուտով իրենք են կրծելու մեկը մյուսի կոկորդը...:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի անհաջողություններն ամենևին էլ չեն կոտրել մեր ազգին. հայ գինվորը **կռվում չի պարտվել**, իսկ հեռավար գինատեսակներով հասցված ծանր կորուստները չեն սասանել նրա ոգին: Ավելին՝ երկու հազարամյակների սահմանագծին մեզանում ծնվել է մի **հերոսական սերունդ**, որի հավասարը չենք ունեցել նվազագույնը՝ վերջին հազարամյակում: Ուղղակի՝ Հայաստանն այսօր չունի հայկական շահերով առաջնորդվող պետական համակարգ և օտարի առջև չխոնարհվող ազգային ընտրանի: Միայն ազգային **նոր ընտրանին** կարող է միավորել ազգը ու ստեղծել արդի ստանդարտներին համապատասխանող նոր տիպի բանակ: Արտաքին վտանգը չհաղթահարած Հայաստանը իր ներքին՝ արժեքային ու գիտատեխնոլոգիական, և արտաքին՝ աշխարհաքաղաքական առաջնահերթությունների հիմնավոր վերանայման կարիք ունի:

Իսկ մինչ այդ՝ **պատերազմի երկրորդ փուլում** հաղթանակի հասնելու համար անկախ Հայաստանի կախյալ ուժային կառույցներն ու քաղաքական դաշտը շտապ կերպով պետք է ախտահանվեն **կրկնակի գործակալական քովիդից**՝ հայկական շահերով առաջնորդվող ազգային գործիչների առողջ ու կենսունակ համախմբման ճանապարհը բացելու համար:

**Խմբ.:**

## **THE DEEP REASONS OF OUR FAILURES**

**Key words** – nation state, hostage-taking, victimization, manageable defeat, scapegoat, imitative confrontations, betrayal contest.

**Edit.**

## **ГЛУБИННЫЕ ПРИЧИНЫ НАШИХ НЕУДАЧ**

**Ключевые слова** – национальное государство, захват в заложники, принесение в жертву, управляемое поражение, козел отпущения, имитационные противостояния, состязание в предательстве.

**Ред.**